

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2005թ. ԱՊՐԻԼԻ 4-ԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՊՐԻԼԻ 23 -Ը ԱՆՑԿԱՑՎԱԾ “ՆՈՐ ԱԿՈՒՆՔ” ՓԲԸ-Ի ԿԵՆՏՐԱԴԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆԸ ԵՆԴԿԱՅԱՑՎՈՂ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի՝ աշխատակազմի լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչությունը սույն թվականի ապրիլի 4-ից մինչև ապրիլի 23-ը ուսումնասիրել է հանձնաժողովի 2004 թվականի հոկտեմբերի 12-ի №128Ն որոշմամբ հաստատված՝ “Նոր-Ակունք” ՓԲԸ-ի կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարումը ([հավելված №1](#)):

Համաձայն հանձնարարականի՝ ուսումնասիրության գործընթացին մասնակցելու համար հրավիրվել էին հասարակական կազմակերպությունները, սակայն նրանք չեն մասնակցել ուսումնասիրությանը:

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ի կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարումն ուսումնասիրվում է առաջին անգամ: Ուսումնասիրության արդյունքների ներկայացուցչական լինելն ապահովելու նպատակով, ըստ հաստատված ծրագրի ([հավելված №2](#)) և նախապես կազմած պլանի, ուսումնասիրությունն անց է կացվել “Նոր-Ակունք” ՓԲԸ-ի կողմից սպասարկվող 10 համայնքներում: Ընկերության մասնագետների հետ նախօրոք ուսումնասիրելով սպասարկման տարածքը, ընտրվել են այնպիսի ուղղություններ և ջրագծեր, որոնցից ընտրված կետերում (բազմաբնակարան շենքեր և առանձնատներ) կատարված ուսումնասիրությունների (հարցումների) արդյունքները՝ ընդգրկելով մասնաճյուղի ամբողջ տարածքը և բնութագրական լինելով ընկերության համար, թույլ են տվել իրատեսական եզրահանգումներ կատարել:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ն իր գործառույթները իրականացնում է Արմավիրի մարզում 2002 թվականի նոյեմբերից: Ընկերության սպասարկման տարածքում գտնվում են Արմավիր և Մեծամոր քաղաքները և 11 գյուղական համայնքներ՝ Ակնալիճ, Դալարիկ, Մրգաշատ, Մյասնիկյան, Մայիսյան, Նորավան, Նորապատ, Բաղրամյան, Լեռնագոգ, Խանջյան և Տարոնիկ, որոնցից Մյասնիկյան, Լեռնագոգ և Տարոնիկ գյուղերում ընկերությունը ընդանրապես ջրամատակարարում չի իրականացնում իսկ Նորապատում սպասարկում է ընդամենը 21 բաժանորդի: Մնացած գյուղական համայնքներում նույնպես ջրամատակարարումն իրականացվում է ոչ բոլոր տնտեսություններին:

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվում են 15 464 տնտեսություններ, որոնցից բաժանորդներ են 12 100-ը: 2005 թվականի ապրիլի 1-ի դրությամբ ջրաչափ է տեղադրված բաժանորդներից 11 491-ի մոտ (95%): Ընկերության սպասարկման տարածքում կան 204 բազմաբնակարան շենքեր:

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ի աշխատակազմը բաղկացած է 110 հոգուց: Ընկերությունը մասնաճյուղեր կամ հենակետեր չունի, սակայն բոլոր համայնքներում գործում են վարձավճարների գանձման խմբեր: Ընկերությունում գործում են 4 վթարային խմբեր՝ երկուսը Արմավիրում, մեկական Բաղրամյանում և Մեծամորում: Արմավիր և Մեծամոր քաղաքների բաժանորդների 97%-ը, իսկ Նորապատ գյուղի 40%-ն է օգտվում կեղտաջրերի հեռացման ծառայությունից, մնացած համայնքներում կեղտաջրերի հեռացում չի իրականացվում: “Նոր-Ակունք” ՓԲԸ-ն խմելու ջուրն արդյունահանում է 9 խորքային հորերից և ունի սնուցման մեկ կապտաժային համակարգ: Ընկերությունը ջրամատակարարումը իրականացնում է Արմավիր, Դալարիկ, Բաղրամյան և Տարոնիկ համայնքներում տեղակայված 4 ջրամբարներից: Ջուրը ջրամբարներ է մղվում մեխանիկական եղանակով (պոմպերով): Արմավիր, Դալարիկ և Բաղրամյան ջրամբարներից ջուրը բաժանորդներին է հասցվում ինքնահոս եղանակով, իսկ Տարոնիկի ջրամբարից՝ պոմպի միջոցով:

2005 թվականի առաջին եռամսյակում արդյունահանվող ջրի միջին ամսեկան ծավալը կազմել է 769 000 խոր.մ, որից բաժանորդների մոտ հաշվառվել է 91 300 խոր.մ կամ 11.9%: 2004 թվականի ընթացքում “Նոր-Ակունք” ՓԲԸ-ն իր բաժանորդներին մատակարարել է 1 466 500 խոր.մ ջուր՝ ծառայության մատուցման 146 798 500 դրամ արժեքով, որից հավաքագրվել է 135.2 մլն դրամ կամ 92 %տոկոս՝ ներառյալ նախկինում կուտակված պարտքերի մարումը:

Ընկերության սպասարկման տարածքում կեղտաջրերի մաքրում չի իրականացվում, սակայն նախատեսվում է Գերմանիայի կողմից տրամադրվող դրամաշնորհի հաշվին՝ որի համար արդեն նախնական համաձայնություն է ձեռք բերվել, կառուցել կեղտաջրերի մաքրման կայան:

Ընկերությունում օգտագործվում է վթարային հաշվառման համակարգչային որոնողական ծրագիր, որում ընգրկված է ամբողջ Արմավիր քաղաքն իր ջրամատակարարման համակարգով: Համակարգիչ են մուտքագրվում բոլոր վթարները ըստ վթարի վայրի և ժամանակի ինչը հնարավորություն է ընձեռում հետահայաց գնահատելու համակարգի տեխնիկական վիճակը:

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ի կողմից մատակարարված ջրի դիմաց հավաքագրումը կազմում է 92% ներառյալ նախքինում բաժանորդների կողմից կուտակված պարտքերի մարումը: Առաջին եռամսյակում ջրամատակարարման համակարգում ջրի կորուստները կազմել են շուրջ 88 %:

1. Ընկերության կողմից մատակարարվող խմելու ջրի որակի ապահովումը: Խմելու ջրի վարակազերծումը (քլորացումը) Ընկերության կողմից

Մատակարարվող խմելու ջրի որակի նկատմամբ հսկողությունը ընկերությունն իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության Արմավիրի մարզային կենտրոնի միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: Մատակարարվող ջրի լաբորատոր հետազոտությունների համար “Նոր-Ակունք” ՓԲԸ-ն և ՀՀ հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոնը համատեղ նախանշել են 50 նմուշառման կետեր, որոնցից յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ վերջինս վերցնում է խմելու ջրի նմուշները: Կատարված հետազոտությունների արդյունքների վերաբերյալ ՀՀ հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոնը յուրաքանչյուր ամիս տեղեկանք է է ներկայացնում “Նոր-Ակունք” ՓԲԸ-ին:

Պետք է նշել, որ նմուշառման համար ընտրված տարածքների ցուցակում ներառված չէ Խանջյան գյուղը, որին մատակարարվող ջրի նմուշառումն իրականացվում է ընդհանուր ջրագծից: Սակայն մեր կարծիքով այն բավարար չէ մատակարարվող ջրի որակի մասին տեղեկատվություն ունենալու համար՝ նմուշառումը պետք է իրականացնել անմիջապես Խանջյան գյուղի բաժանորդների մոտ:

Բացի վերը նշվածից հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոնը յուրաքանչյուր ամիս, պետական պատվերով, Արմավիր քաղաքում կատարում է խմելու ջրի 17 նմուշառում, ինչպես նաև յուրաքանչյուր եռամսյակը մեկ, բացառությամբ Մեծամոր քաղաքի, կատարում է Արմավիրի մարզի ամբողջ տարածքում մատակարարվող խմելու ջրի որակի հետազոտություն: Մեծամորին մատակարարվող ջրի որակի հսկողությունը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության Արմավիրի մարզի փորձագիտական կենտրոնի Մեծամորի մասնաճյուղի կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ընկերությունում բացակայում է ջրի որակի անհամապատասխանության դեպքում իրականացվելիք գործողությունների ընթացակարգը:

Ներկայումս “Նոր-Ակունք” ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի վարակագերծումը իրականացվում է 4 ջրամբարներից 2-ում և կապտաժային համակարգում: Ներդրումային ծրագրով նախատեսված է, որ մինչև տարեվերջ ավտոմատ գազաքլորացման կայաններ կկառուցվեն և կշահագործվեն ջրառի բոլոր ջրամբարներում և խորքային հորերում:

Քլորացման կայանի կառուցման աշխատանքները Արմավիրի ՕԿՁ-ում գտնվում են ավարտական փուլում:

Աշխատանքային խմբի կողմից էքսպրես եղանակով կատարվեց մատակարարվող խմելու ջրում մնացորդային քլորի ուսումնասիրություն: Ուսումնասիրության պահին մատակարարվող ջրում մնացորդային քլոր չհայտնաբերվեց:

Ուսումնասիրության շրջանակներում աշխատանքային խումբը այցելեց Արմավիրի օրվա կարգավորիչ ջրամբարը (ՕԿՁ): ՕԿՁ-ում պահվում են հատուկ կարված և կնքած մատյաններ, որոնցից մեկում գրանցվում է տեղեկատվություն խմելու ջրի քլորացման վերաբերյալ: Սակայն նշված մատյանի անփույթ և անընթեռնելի լրացված

լինելու պատճառով հնարավոր չեղավ ծանոթանալ նրանում գրանցված տեղեկատվությանը:

Ընկերությունում պատշաճ ձևով չի իրականացվում ՕԿՁ-ի աշխատակիցների հրանգավորումը քլորացման չափաքանակների վերաբերյալ, չկա քլորացման վերաբերյալ որևէ ընթացակարգ կամ հրահանգ:

Ըստ “Նոր-Ակունք” ՓԲԸ-ի մասնագետների քլորացումը իրականացվում է նորմայից ավել, որպեսզի հետագայում ջրամբարներից մատակարարվող ջուրը, խառնվելով խորքային ջրերի հետ, ապահովի քլորացման անհրաժեշտ մակարդակը:

2. Ջրամատակարարման հաստատված գրաֆիկները և նրանց փոփոխությունները

Ջրամատակարարման հաստատված գրաֆիկները հայտարարվել են (հրապարակվել են) միայն տեղի հեռուստատեսությամբ: Բացի հեռուստատեսությունից ջրամատակարարման գրաֆիկների մասին բաժանորդները որևէ այլ ձևով չեն իրազեկվել: Գրաֆիկներում կատարված փոփոխությունների մասին նույնպես բաժանորդներին իրազեկվել է միայն տեղի հեռուստատեսությամբ տրված հայտարարությամբ:

Հրապարակված գրաֆիկները թերի են: Ջրամատակարարման փաստացի ժամերը ոչ միշտ են համընկնում հրապարակված գրաֆիկին: Ուսումնասիրության ընթացքում աշխատանքային խումբը գյուղական մի քանի համայնքներում հանդիպեց գյուղապետարաններում փակցված ջրամատակարարման գրաֆիկների:

Հրապարակված գրաֆիկներում բացակայում է Նորապատ գյուղական համայնքի ջրամատակարարման գրաֆիկը:

3. Բազմաբնակարան շենքերի և առանձնատների մուտքագծերում խմելու ջրի ճնշման համապատասխանությունը սահմանված պահանջներին

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքներում կատարված չափումների և հարցման արդյունքներով, մատակարարվող ջրի ճնշումները բավարար չեն՝ բացառությամբ Մեծամոր քաղաքից: Ջրի ճնշման փոքր լինելու կամ ջուր չլինելու պատճառով մեծ մասամբ տեղերում հնարավոր չեղավ չափել այն: Գնումները հատկապես անբավարար են գյուղական համայնքներում: Բնակիչները ջուրը վերցնում են կամ ջրաչափի տեղակայման հորից, կամ էլ անմիջապես ջրագծից, կամայական տեղում: Ցածր ճնշման պատճառով որոշ բնակավայրերում բնակիչները հանել են ջրաչափերը, որպեսզի կարողանան օգտվել խմելու ջրից: Այս դեպքերը մեծ մասամբ տեղ են գտել Դալարիկ և Մրգաշատ գյուղերում, ինչպես նաև Արմավիր քաղաքում, որտեղ բաժանորդները ստիպված օգտվում էին անհատական պոմպերից,

ջուրը հորից կամ ջրագծից մղելու համար: Խանջյան գյուղում աշխատանքային խումբը փորձեց չափել ջրի ճնշումը համակարգում, սակայն այն այնքան քիչ էր, որ չհաջողվեց: Ըստ բնակիչների այստեղ առավելագույն ճնշումը արձանագրվում է ձմռան ամիսներին, երբ հաճախ խմելու ջուր ունենում են մինչև երկրորդ հարկի բնակիչները:

4. Վթարային ծառայության հեռախոսահամարների և հասցեների վերաբերյալ սպառողների իրազեկումը, իրազեկման մեխանիզմները: Ստացված ահազանգերի, բողոքների, հարցադրումների գրանցման համար հատուկ գրանցամատյանների առկայությունը, դրանցում գրանցված ահազանգերին, բողոքներին և հարցադրումներին տրված լուծումները և դրանց մասին սպառողների իրազեկումը:

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ն վթարային ծառայության հեռախոսահամարների մասին սպառողներին իրազեկում է հետևյալ կերպ.

ա) բաժանորդներին տրամադրվող վճարման փաստաթղթերում նշված են Ընկերության վթարային ծառայության հեռախոսահամարները,

բ) Ընկերության հեռախոսահամարները նշված են ընկերությանը պատկանող մեքենաների վրա:

Ընկերությունում կան բաժանորդների ահազանգերի, բողոքների, հարցադրումների գրանցման համար նախատեսված հատուկ գրանցամատյաններ, նախատեսված ջրատարների, կոյուղու և ջրաչափերի վթարների գրանցման համար: Վթարների գրանցամատյաններում կային թերություններ՝ մասնավորապես չեն նշվում վթարների մասին ստացված տեղեկատվության ստացման և դրանց վերացման ժամերը, նշվում է միայն օրը, չի մանրամասվում վթարների բնույթը և իրականացված աշխատանքները:

Աշխատանքային խումբը, ստուգելու համար վթարային ծառայության օպերատիվ արձագանքման հմտությունը, փորձնականորեն զանգեց վթարային ծառայության՝ վճարման փաստաթղթում եղած հեռախոսահամարով, հայտնելով մտացածին վթարի մասին: Հետագա ստուգումը ցույց տվեց, որ Ընկերության դիսպետչերի կողմից ահազանգը գրի էր առնվել և տրվել էին համապատասխան հանձնարարականներ վթարի վայր մեկնելու մասին (աշխատանքային խումբը ժամանակին զգուշացրեց ահազանգի կեղծ լինելու մասին):

Ընկերությունում ստացված ահազանգերին, բողոքներին, հարցադրումներին, տրված լուծումներին և դրանց մասին սպառողներին իրազեկելու գործընթացը ուսումնասիրելու նպատակով աշխատանքային խումբը ընտրովի կարգով ուսումնասիրել է 10-ից ավելի տարբեր բնույթի դիմում-բողոքներ, որոնք մտից գրությունների համապատասխան ծածկագրերով հաշվառված են՝ յուրաքանչյուրն ըստ իր բնույթի: Ուսումնասիրվել են 2004 թվականին ստացված 01/041, 02/13, 03/65, 04/10, 05/06, 06/22, 07/91, 08/12, 09/167 համարների գրությունները:

Ուսումնասիրությունների արդյունքը հետևյալն է.

I. Իրացման ծառայությանն ուղղված գրությունների մասով.

1. Եղիազարյան Եղիսե, բնակվող ք.Արմավիր, Հանրապետության 12.3

Բնույթը՝ խնդրում է կատարել վերահաշվարկ (19.03.2004թ.),

Արդյունքը՝ կազմված է համապատասխան ակտ, ուսումնասիրության արդյունքների մասին: Դիմումի պատճենը և իրացման բաժնից հանած էպիկրիզը կցվում է:

2. Զատիկյան Մերուժ, բնակվող ք.Արմավիր, Աբովյան 103

Բնույթը՝ խնդրում է կատարել վերահաշվարկ (19.01.2004թ.) և ճշտել 2-րդ հասցեում (Աբովյան 105) ջրագծերի առկայությունը:

Արդյունքը՝ Դիմումի պատճենը և իրացման բաժնից հանած էպիկրիզը կցվում է:

3. Նիկողոսյան Սամվել, բնակվող ք.Արմավիր, Մանուշյան 8

Բնույթը՝ հայտնում է, որ ունի գերավճար, ներկայացված է պայմանագիրը (21.05.2004թ.):

Արդյունքը՝ հաշվի է առնված և արտացոլված է էպիկրիզում: 23010 դրամը հետագայում հաշվի է առնված:

4. Իկիլիկյան Վարդան, բնակվող ք.Արմավիր, 107 թաղամաս, բն.18

Բնույթը՝ հայտնում է, որ ունի սեփական ջրհոր, խնդրում է չգանձել ջրի և կոյուղու վարձ:

Արդյունքը՝ կազմված է համապատասխան ակտ, ուսումնասիրության արդյունքների մասին: Դիմումի պատճենը և էպիկրիզը կցվում է: Կատարված է վերահաշվարկ, գանձումները դադարեցված են:

5. Գասպարյան Քնարիկ, բնակվող ք.Արմավիր, Նալբանդյան 97

Բնույթը՝ խնդրում է կատարել վերահաշվարկ:

Արդյունքը՝ կատարված է վերահաշվարկ համապատասխան ժամանակաշրջանի համար:

6. Հանրային բաժանորդների դիմումներից (“Քնար և որդի” ՍՊԸ, ք. Արմավիր, Բաղրամյան 27/3) բաժանորդը հայտնում է, որ շինարարական աշխատանքներ իրականացնելու պատճառով ջրամատակարարումը լրիվ դադարեցված է, որի համար ընկերությունը չպետք է գանձի այդ ժամանակահատվածի գումարը:

Արդյունքը՝ համաձայն էպիկրիզի ուսումնասիրության դիմումով շարադրված խնդրանքը բավարարված է :

II. Տեխնիկական ծառայությանն ուղղված գրությունների մասով.

1. Հակոբյան Էմմա, բնակվող ք.Արմավիր, Բաղրամյան 29/1.10

Բնույթը՝ խնդրում է տեղափոխել ջրաչափը ընդհանուր ջրագծի վրա (09.04.2004թ.): Արդյունքը՝ կա շահագործման ծառայության ղեկավարի պատասխանը, որտեղ նկարագրվում է, որ ջրաչափը տեղափոխելու հարմարություն չկա (26.04.2004թ.):

2. Ակնալիճ գյուղի Հ.Ավետիսյան փողոցի բնակիչներից՝ թվով 15 մարդ (09.07.2004թ.) և 2-րդ դիմում-բողոքը՝ (14.07.2004թ.) թվով 15 մարդ, ջրի անորակության և խմելու համար ոչ պիտանիության վերաբերյալ:

Արդյունքը՝

Կազմված է զեկուցագիր՝ շահագործման ծառայության ղեկավարի կողմից: Ստուգման արդյունքում պարզվել է, որ պետք է վերականգնել գյուղի կենտրոնական փողոցով անցնող ջրագիծը, համապատասխան միացում կատարելով Հ.Ավետիսյան փողոցի ջրագծի հետ (21.07.2004թ.): Կատարման մասին տեղեկատվություն չկա:

Արմավիրի մարզի հակահամաճարակային տեսչության գլխավոր պետական սանիտարական բժիշկ Ա.Պողոսյանի 01-27/130, առ 03.08.2004թ. գրությունից պարզվեց, որ 29.04.2004թ. Ակնալիճ գյուղի ջրամատակարարման վերաբերյալ կա համապատասխան եզրակացություն, որը դիմումի հետ կցվում է:

5. Պլանային և վթարային աշխատանքների իրականացման դեպքերում սպառողներին և իրավական ակտերով սահմանված համապատասխան մարմիններին ջրամատակարարման դադարեցնելու և վերականգնման ժամկետների մասին իրազեկումը

Պլանային աշխատանքների իրականացման դեպքում Ընկերությունը բաժանորդներին իրազեկում է հեռուստատեսությամբ տրված հայտարարությունների միջոցով: Վթարների և դրանց վերացմանն ուղղված աշխատանքների կատարման վերաբերյալ ոչ մի հայտարարություն չի տրվում:

6. Խմելու ջրի մատակարարումը սահմանված ժամկետներում չվերականգնելու դեպքում ջրագրկված տարածքների սպառողներին անվճար խմելու ջուր մատակարարելու դեպքերը և դրա վերաբերյալ ընկերության կատարած նախապատրաստական աշխատանքները

Խմելու ջրի մատակարարման ընդհատումների՝ նվազագույն պահանջներով սահմանված առավելագույն ժամկետների խախտման դեպքեր Ընկերությունում

արձանագրվել են, սակայն Ընկերությունը երբևէ իր բաժանորդներին այլ եղանակներով խմելու ջուր չի մատակարարել:

Ընկերությունը մշակված ընթացակարգ չունի խմելու ջրի մատակարարումը սահմանված ժամկետներում չվերականգնելու դեպքում ջրագրված տարածքների սպառողներին անվճար խմելու ջուր մատակարարելու վերաբերյալ: Այս ընթացակարգը անհրաժեշտ է ունենալ, քանի որ ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են ջրամատակարարման երկարատև ընդհատումներ:

Նվազագույն պահանջներով սահմանված առավելագույն ժամկետները խախտելու դեպքում “Բաժանորդներին այլընտրանքային եղանակով ջուր մատակարարելու համար Նոր-Ակունք” ՓԲԸ-ն ցանկանում է ձեռք բերել երկու բեռնատար մեքենաներ՝ էմալապատ տարողություններով, ինչի համար արդեն մրցույթ է հայտարարված:

7. Թերմատակարարված ջրի կամ ՀՀ գործող ստանդարտին չհամապատասխանող խմելու ջուր մատակարարելու դիմաց սպառողների տվյալ ամսվա վճարման ենթակա գումարների նվազեցման դեպքեր

Ընկերությունում արձանագրված է խմելու ջրի թերմատակարարման 29 դեպք, սակայն միայն մի դեպքում է, որ Ընկերությունը նվազեցրել է բաժանորդների կողմից վճարման ենթակա գումարները: Արմավիրում քաղաքի Սայաթ-Նովայի 1-ից 8 և Գործարանային 1 և 2 հասցեներում, շինարարական աշխատանքների կատարման հետևանքով բաժանորդներին անորակ ջուր է մատակարարվել, որը Ընկերությունը ընդունել է որպես ջրի թերմատակարարում: “Նոր-Ակունք” ՓԲԸ-ի մասնագետները կատարել են թերմատակարարված ջրի ծավալների հաշվարկ, որի հիման վրա էլ տվյալ ամսվա ընթացքում բաժանորդների կողմից վճարման ենթակա գումարները նվազացվել են 50 %-ով: Մնացած դեպքերում ընկերության կողմից բաժանորդներին որևէ փոխհատուցում չի տրվել:

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ու չկա մշակված ընթացակարգ թերմատակարարված ջրի կամ ՀՀ գործող ստանդարտին չհամապատասխանող խմելու ջուր մատակարարելու դեպքում բաժանորդների տվյալ ամսվա վճարման ենթակա գումարները նվազեցնելու համար:

8. “Նոր-Ակունք” ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքներում ջրամատակարարման գրաֆիկների և ճնշումների ուսումնասիրությունների արդյունքներն ըստ համայնքների

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 13 համայնքներից ուսումնասիրություններ իրականացվել են 10-ում: Մնացած երեք համայնքներում

(Տարոնիկ, Լեռնագոգ և Մայիսյան) ընկերությունը ջրամատակարարման ծառայություն դեռևս չի մատուցում: Այս համայնքներում ջրամատակարարման ծառայություններ կմատուցվեն ներդրումային ծրագրի ավարտին:

Մնացած համայնքներում բաժանորդներ են հանդիսանում՝

1. Արմավիր՝ **8800** տնտեսությունից բաժանորդ են **7172**-ը,
1. Մեծամոր՝ **2800** տնտեսությունից բաժանորդ են **2285**-ը,
2. Բաղրամյան՝ **190** տնտեսությունից բաժանորդ են **184**-ը,
3. Ակնալիճ՝ **575** տնտեսությունից բաժանորդ են **535**-ը,
4. Մրգաշատ՝ **901** տնտեսությունից բաժանորդ են **500**-ը,
5. Խանջյան՝ **328** տնտեսությունից բաժանորդ են **322**-ը,
6. Մայիսյան՝ **297** տնտեսությունից բաժանորդ են **144**-ը,
7. Նորավան՝ **191** տնտեսությունից բաժանորդ են **191**-ը,
8. Դալարիկ՝ **707** տնտեսությունից բաժանորդ են բոլորը,
9. Նորապատ՝ **675** տնտեսությունից բաժանորդ են **21**-ը,

Ընկերության սպասարկման տարածքում աշխատանքային խմբի կողմից կատարվել է **178** հարցում: Ստորև բերված է հրապարակված գրաֆիկների ուսումնասիրության արդյունքները՝

աղյուսակ №1

№	Բնակավայրի անվանումը	Ուսումնասիրված կետերի քանակը	Համապատասխանում են հրապարակված գրաֆիկներին	Չեն համապատասխանում հրապարակված գրաֆիկներին	Նվազագույնը 4 ժամյա ջրամատակարարմամբ ապահովված չեն
1	Արմավիր	98	66	32	5
2	Մեծամոր	45	39	6	2
3	Գյուղեր	35	12	23	22
	Ընդամենը	178	117	61	29

Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ջրամատակարարման խնդիրներ կան հատկապես հետևյալ գյուղերում:

Դալարիկ

Գյուղին ջրամատակարարման ծառայություններ մատուցելու համար “Նոր-Ակունք” ՓԲԸ-ն պայմանագիր է կնքել Դալարիկ գյուղի գյուղապետարանի հետ: Գյուղում ջրամատակարարումը իրականացվում է ըստ թաղամասերի, ընդ որում յուրաքանչյուր թաղամաս ջուր է ստանում 3-ից 7-ը օրը մեկ, այն էլ մի քանի ժամով: Գյուղի բնակչությունը կենցաղային կարիքների համար օգտագործվող ջուրը վերցնում է գյուղի մոտ գտնվող երկաթգծի կայարանից՝ երկաթուղու միջոցներով բերված վազոն ցիստերնից:

Անբավարար է նաև այս գյուղին մատակարարվող ջրի ճնշումը: Բաժանորդները ապամոնտաժում են ջրաչափերը, որպեսզի ծորակներից կարողանան ջուր վերցնել: Գյուղին մատակարարված ջուրը խմելու համար չի օգտագործվում:

Խմելու ջուրը բնակչությունը գնում է անհատ ձեռներեցներից, բերված ջրի համար ստիպված վճարելով 3 750 դրամ 1 խոր.մ համար: Գյուղում նույնիսկ կար մի փողոց որտեղ վթարի հետևանքով բնակիչները ջուր չունեն արդեն երկու տարի:

Այսպիսի պայմանների դեպքում գյուղի բնակչությունը գյուղապետի պարտադրմամբ ստիպված է լինում վճարել չմատակարարված կամ մատակարարման դեպքում անորակ ջրի համար՝ յուրաքանչյուր անձի համար օրական 100 լիտր հաշվարկով կամ ամսական մոտ 450 դրամ: Նշենք, որ համաձային հանձնաժողովի 2004 թվականի հոկտեմբերի 12-ի №128Ն որոշման Դալարիկ գյուղում խմելու ջուր պետք է մատակարարվի օրական առնվազն 4 ժամ:

Ակնալիճ

Ակնալիճ գյուղում բնակիչները հիմնականում դժգոհ են մատակարարվող ջրի որակից՝ այն հիմնականում խմելու համար պիտանի չէ (ունի համ, հոտ, անորոշ գույն, կան նստվածքներ, կեղտոտ է): Նշվեցին բազմաթիվ դեպքեր երբ բնակչությունը վարակվել է մատակարարվող ջրից: Նշված դեպքերի վերաբերյալ Ընկերության անգործության պատճառով բնակիչները անիմաստ են համարում դիմում բողոքներ ներկայացնել: Ինչպես արդեն նշվել է, ուսումնասիրության ընթացքում Ակնալիճ գյուղում վերցված ջրի նմուշը ըստ լաբորատոր հետազոտության եզրակացության ոչ սանիտարաքիմիական ոչ էլ մանրէաբանական բաղադրությամբ չի համապատասխանում ՀՀ գործող ստանդարտներին:

Մրգաշատ

Անբավարար է նաև այս գյուղին մատակարարվող ջրի ճնշումը: Բաժանորդները ապամոնտաժում են ջրաչափերը, որպեսզի ծորակներից կարողանան ջուր վերցնել:

Գյուղի որոշ մասերում ջուրը ստիպված են լինում վերցնել ջրաչափի համար նախատեսված հորերից: Կան բաժանորդներ որոնք ընդհանրապես չեն օգտվում ընկերության մատակարարած ջրից: Նրանք օգտվում են իրենց տարածքում փորած խորքային հորերից՝ պոմպի միջոցով: Արձանագրվեցին դեպքեր երբ ջրաչափի զրոյական ցուցմուքի դեպքում բաժանորդներին պարտադրում են վճարել յուրաքանչյուր անձի համար ամսական 500 դրամ՝ ըստ բնակիչների գյուղապետը կամ այլ լիազորված անձիք ուղակիորեն վերցնում են բնակչից այդ գումարները:

Ընկերության աշխատակիցների պարգաբանմամբ Մրգաշատի 500 բաժանորդներից 286-ը ունեն գերավճարներ:

Նորապատ

Ընկերության հրապարակած ջրամատակարարման գրաֆիկներում այս գյուղն ընդգրկված չէ: Նորապատ գյուղական համայնքում կան 21 բաժանորդներ, սակայն վթարի հետևանքով ջրամատակարարման ծառայություններից են օգտվում միայն 6-ը: Բնակիչների խոսքերով արդեն երեք ամիս է, ինչ տեղի է ունեցել այդ վթարը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընկերության կողմից մասնակիորեն կամ ամբողջությամբ չի պահպանվում հանձնաժողովի 2004թ հոկտեմբերի 12-ի №128Ն որոշմամբ հաստատված “Նոր-Ակունք” ՓԲԸ-ի կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների հետևյալ կետերը՝

ա) նվազագույն պահանջների 3-րդ կետի ա) ենթակետը՝ պատշաճ կերպով չի հրապարակել իր կողմից սպասարկվող տարածքների ջրամատակարարման գրաֆիկները:

բ) նվազագույն պահանջների 3-րդ կետի բ) ենթակետը՝ բացառությամբ Մեծամոր քաղաքի և Բաղրամյան գյուղի մնացած համայնքներում մատակարարվող խմելու ջրի ճնշումը բազմաբնակարան շենքերի և առանձնատների մուտքագծերում չի ապահովվում սահմանված պահանջներին:

բ) նվազագույն պահանջների 3-րդ կետի ե) ենթակետը՝ սպառողներին չի իրազեկել վթարի և այն վերացնելուց հետո խմելու ջրի մատակարարման վերսկսման ժամկետի մասին:

գ) նվազագույն պահանջների 4-րդ կետը՝ նախատեսված ժամկետներում խմելու ջրի մատակարարումը որևէ պատճառով չվերականգնելու դեպքում Ընկերությունը սահմանված կարգով ջրազրկված տարածքների սպառողներին չի ապահովել խմելու ջրի որակին ներկայացվող պահանջներին համապատասխանող ջրով (անվճար) .

դ) նվազագույն պահանջների 5-րդ կետը՝ նախատեսված ժամկետներում խմելու ջրի մատակարարումը որևէ պատճառով չվերականգնելու դեպքում ջրազրկված տարածքների սպառողներին սահմանված կարգով խմելու ջրի որակին ներկայացվող

պահանջներին համապատասխանող ջրով (անվճար) չապահովելու դեպքում սպառողների տվյալ ամսվա վճարման ենթակա գումարը չի նվազեցրել (բացառությամբ մեկ դեպքի)։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ի կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող նվազագույն պահանջների կատարմանը անդրադառնալ ընկերությունում իրականացվող ներդրումային ծրագրի ավարտին՝ 2005 թվականի նոյեմբեր ամսին։